

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՋՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/7Ծ-1**

ք. Երևան

«15» 06 2023 թ.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը», ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Եվրոբուլդ Պյուն» ՍՊԸ և «Տարտ Գրուպ» ՍՊԸ կոնսորցիումը, ի դեմս «Եվրոբուլդ Պյուն» ՍՊԸ-ի տնօրեն Յ. Ստեփանյանի, որը գործում է ընկերությունների միջև 25.04.2023թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Հ-1, Վ. Պտղնու տրանսպորտային հանգույց - Ջրաբեր-Հրազդան -Հրազդանի քրեակատարողական հիմնարկ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ21+700 - կմ24+000 հատվածի և Հ-3, Երևան (Ջրաշխարհ, Մ-4-ի հետ հատման տեղ)-Գառնի -Գեղարդի վանք հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ33+500-կմ38+100 հատվածի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն Հավելված թիվ 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 **Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ**, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 (երեք) տարին: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված

պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:^{28.1}

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուին Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուին հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պլանակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուին պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուին չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Մոյն կետի կիրառման դեպքում Պատվիրատուին ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցներ: և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուին չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուին էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուին չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆՆ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **1 395 720 000** (մեկ միլիարդ երեք հարյուր իննսուսհինգ միլիոն յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուին իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուին նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուին վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում:

Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում՝ շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը *
1	Կապալառուն չունի շինարարական նյութերի արդյունահանման թույլտվություն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.6 տոկոսի չափով
2	Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
3	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
4	Գրունտի հանույթից առաջացած ավելցուկային նյութեր և հողի վերին շերտը չեն տեղափոխվում և պահվում հատուկ նախատեսված վայրերում	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
5	Ծառաթփային բուսականությունը հատված է (հատումը իրականացվում է միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված դեպքերում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
6	Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չեն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
7	Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագծի սկզբում և վերջում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
8	Վտանգավոր տեղամասը ցանկապատված չէ, շինարարական տեղամասում պահպանված չեն ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախագծուղացնող	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.6 տոկոսի չափով

	նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսաազդանշանային առկայծող լայտերներով և այլն)	
9	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
10	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
11	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցները	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
12	Շինարարությունում գրառված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
13	Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
14	Շինարարական նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
15	Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկական և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավերորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով

1. Սույն աղյուսակում նշված պատասխանատվության միջոցները Կապալառուի նկատմամբ կարող են կիրառվել արձանագրված խախտման վերացման համար պայմանագրով նախատեսված աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնողի կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում՝ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից Պատվիրատուին ներկայացված գրավոր հավաստման հիման վրա:

* 2. Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 4-րդ ենթակետի.

1) տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0.5 տոկոսից,

2) եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով կնքված այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակներում արձանագրվել է ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը,

3) եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է չափաբաժիններով, և ընտրված մասնակցի հետ կնքված պայմանագիրը ներառում է մեկից ավելի չափաբաժիններ, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով պայմանագրի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ.

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:


9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՄ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Միկոյան փ. Շ.4, բն.29, Նոր
Նորք,
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 2050022706481001
ՀՎՀՀ 02861537
Ընկերության տնօրեն
Հ. Ստեփանյան



/ստորագրություն/
Կ.Տ



/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող շրջանակներ:

**ՉԱՓԱՐԱԺԻՆ 1
ԾԱՎԱԼԱՌԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ**

Հ-1, Վ. Պտղնու տրանսպորտային հանգույց - Ջրաբեր-Հրազդան -Հրազդանի քրեակատարողական հիմնարկ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ21+700 - կմ24+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ

ՀՀ հազար դրամ

NN	Աշխատանքների անվանումը	չափման միավոր	Ցավված	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
I. Հողային աշխատանքներ					
1	10e-IV բնահողի մշակում բուլդուզերով, տեղափոխում լիցք 50մ (հարթում. ջրում. խտացում)	մ ³	135,5	0.608	82.406
2	10e-IV բնահողի մշակում բուլդուզերով, տեղափոխում լիցք 30մ (հարթում. ջրում. խտացում)	մ ³	105,2	0.584	61.420
3	10e-IV բնահողի մշակում բուլդուզերով, տեղափոխում լիցք 20մ (հարթում. ջրում. խտացում)	մ ³	80,08	0.547	43.832
4	10e-IV կարգի բնահողի մշակում բուլդուզերով, տեղափոխում 50մ կուտակումով, բարձում էկս 1.5մ3 շ.տ ա/ի և տեղափոխում լիցք 1 կմ (հարթում. ջրում. խտացում)	մ ³	150	1.824	273.675
5	10e-IV կարգի բնահողի մշակում բուլդուզերով, տեղափոխում 30մ կուտակումով, բարձում էկս 1.5մ3 շ.տ ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ ³	685	2.493	1708.034
6	10e-IV բնահողի քանդում էկս 1.5մ3 շ.տ կողքի կուտակումով (խողովակների հետլիցքի համար)	մ ³	35	1.338	46.829
7	10e-IV կարգի բնահողի մշակում բուլդուզերով, տեղափոխում 20մ կուտակումով, բարձում էկս 1.5մ3 շ.տ ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ ³	700	2.433	1702.865
8	10e-IV բնահողի մշակում ձեռքով, բարձում ա/ի էկս 1.5մ3 շ.տ և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ ³	132,24	4.014	530.798
9	10e-IV բնահողի քանդում էկս 1.5մ3 շ.տ բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ ³	1552,24	2.372	3681.677
10	ճանապարհային հագուստի քանդում, բարձում ա/ի էքս. 1.5մ3 շ.տ. և տեղափոխում լցակույտ միջ 7կմ:	մ ³	574,8	2.433	1398.295
11	Ե/բ 30x34 վաքերի ապամոնտաժում, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ ³	72	2.433	175.152
Ընդամենը I					9704.982
II. Կողային առու					
1	Կողային առուների իրականացում 10e-IV կարգի բնահողով էկս 0.65մ3 շ.տ բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ ³	408,63	2.007	820.099
Ընդամենը II					820.099
III. Կողնակներ					
1	Կողնակների իրականացում ավագակոպային նյութով h=10սմ ԳՕՍՍ 25607-2009	մ ²	4504,59	0.900	4054.517
Ընդամենը III					4054.517
IV. Երթևեկելի մաս					
1	Մանրահատիկ խիտ տաք ա/բ h=4սմ տիպ "Ե" ԳՕՍՍ 9128-2013	մ ²	17616,45	4.075	71781.970
2	Խոշորահատիկ ա/բ h=6սմ ԳՕՍՍ 9128-2013	մ ²	17616,45	5.838	102851.777

3	Իճնավազային հիմք (C-5) h=20սմ ԳՕՍՍ 25607-2009 100մ ² համար խիճ (40-70) 10% - 2.6մ ³ խիճ (20-40) 35% - 9.1մ ³ խիճ (10-20) 20% - 5.2մ ³ խիճ (5-10) 10% - 2.6մ ³ խիճ (0-5) ավազ 25% - 6.5մ ³ ջուր-1.1մ ³	մ ²	6371,78	1.581	10075.261
4	Հիմքի (C-5) մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 0.6լ/մ ² ԳՕՍՍ Ռ 58952.1-2020	մ ²	6371,78	0.487	3100.080
5	Հատիկավոր ենթահիմք (ավազակուպիճ) h=10սմ ԳՕՍՍ 25607-2009	մ ²	6371,78	0.791	5037.630
6	Տեղում սառը վերամշակում h=20սմ (ռեյսալինգ) ցեմենտի ավելացումով 1մ ² - 16կգ հավելանյութ խիճ 20-40մմ-349.62մ ³	մ ²	12329,55	2.189	26994.289
7	Հիմքի մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 0.6լ/մ ²	մ ²	11244,67	0.487	5470.901
Ընդամենը IV					225311.909
V. Իջատեղեր և մուտքեր					
1	10e-IV բնահողի բանդում էկս 1.5մ ³ շ.տ բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ ³	385	2.007	772.675
2	Մանրահատիկ խիտ "Ե" ա/բ h=4սմ (438+663+2727.42) ԳՕՍՍ 9128-2013	մ ³	3828,42	4.075	15599.711
3	Իճնավազային հիմք C-5 h=12սմ 100մ ² համար ԳՕՍՍ 25607-2009 խիճ (40-70)- 10% - 1.56մ ³ խիճ (20-40)- 35% - 5.46մ ³ խիճ (10-20)- 20% - 3.12մ ³ խիճ (5-10)- 10% - 1.56մ ³ խիճ (0-5)- ավազ 25% - 3.9մ ³ ջուր-1.1մ ³	մ ²	2827,9	1.338	3783.632
4	Հիմքի (C-5) մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 0.6լ/մ ² ԳՕՍՍ Ռ 58952.1-2020	մ ²	2827,9	0.487	1375.866
5	Խոշորահատիկ ա/բ h=6սմ ԳՕՍՍ 9128-2013	մ ²	1101	5.838	6428.072
6	Իճնավազային հիմք C-5 h=20սմ 100մ ² համար ԳՕՍՍ 25607-2009 խիճ (40-70)- 10% - 2.6մ ³ խիճ (20-40)- 35% - 9.1մ ³ խիճ (10-20)- 20% - 5.2մ ³ խիճ (5-10)- 10% - 2.6մ ³ խիճ (0-5)- ավազ 25% - 6.5մ ³ ջուր-1.1մ ³	մ ²	1101	1.581	1740.936
7	Հիմքի (C-5) մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 0.6լ/մ ² ԳՕՍՍ Ռ 58952.1-2020	մ ²	1101	0.487	535.673
8	Հատիկավոր ենթահիմք (ավազակուպիճ) h=10սմ ԳՕՍՍ 25607-2009	մ ²	1101	0.791	870.468
Մետ. խողովակ Ø 530/7մմ ԳՕՍՍ 10704-91					
1	Ավազակուպային շերտ h=10սմ	մ ³	5,5575	4.136	22.983
2	Մետ. խողովակի Ø530/7մմ տեղադրում	զծմ	85,5	87.576	7487.740
3	Մետ. խողովակի Ø530մմ ջրամեկուսացում (2շերտ տաք բիտումով)	զծմ	77,1	1.824	140.669
4	Միաձույլ B-20 բետոնից գլխամասերի կառուցում	մ ³	11,2	79.062	885.490
5	Բետոնե գլխամասերի ջրամեկուսացում (2շերտ տաք բիտումով)	մ ²	42	1.095	45.977

Մետ. խողովակ Ø 273/5մմ ԳՕՍՏ 10704-91					
1	Ավազակոպնային շերտ h=10սմ	մ ³	23,313	4.136	96.412
2	Մետ. խողովակ Ø 273/5մմ	զծմ	647,5	40.139	25989.976
3	Խողովակի ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	զծմ	613,5	1.034	634.287
4	Միաձույլ բետոն B-20 հատման համար վաքի հետ	մ ³	2,55	79.062	201.607
Ջրընդունիչ L=33 զծմ / Իջատեղ դեպի Արվյան 54.8զծմ					
1	Ավազակոպնային շերտ h=10սմ	մ ³	2,145	4.136	8.871
2	Հավաքովի ե/բ վաք 30x34սմ	զծմ	33	15.569	513.779
3	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ ²	41,58	1.095	45.518
Ցանց					
1	Մետ. շվեյլեր N8	կգ	465,3	0.851	396.172
2	Մետ. շվեյլեր N6.5	կգ	700,92	0.851	596.786
Ընդամենը V					68173.299
VI. Մայթեր					
1	Բետոնե սալիկների. ձևավոր տեղադրում. մոխրագույն h=6սմ	մ ²	2487,6	8.514	21180.234
2	Ավազացեմենտային չոր խառնուրդ h=9սմ (70%-30%)	մ ²	2487,6	1.703	4236.047
3	Հավաքովի բետոնե անվտանգության եզրաքար 15x30սմ ԳՕՍՏ 32018-2012. ԳՕՍՏ 32961-2014 - միաձույլ բետոնե հիմք B-15 1զծմ-0.035մ ³ - ավազակոպնային շերտ h=5սմ 1զծմ-0.0125մ ³	զծմ	462	8.028	3708.840
5	Միաձույլ B-20 բետոնե 20x50սմ եզրաշար - ավազակոպնային. 1զծմ-0.01մ ³	զծմ	62,4	5.838	364.316
6	Հավաքովի բետոնե 8x20սմ եզրաշարի տեղադրում ԳՕՍՏ 13015-2012 - միաձույլ բետոնե հիմք B-15 1զծմ-0.048մ ³ - ավազակոպնային շերտ h=5սմ 1զծմ-0.014մ ³	զծմ	336	2.493	837.810
7	Միաձույլ B-20 բետոնե 10x20սմ եզրաշար - ավազակոպնային. 1զծմ-0.005մ ³	զծմ	724,7	3.892	2820.723
Ընդամենը VI					33147.969
VII. Հավաքովի ե/բ վաքեր ԳՕՍՏ 32955-2014					
30x34սմ					
1	10e-IV բնահողի մշակում ձեռքով. բարձում ա/ի էկս 1.5մ ³ շ.տ և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ ³	19,5	4.257	83.015
2	Ավազակոպնային շերտ h=10սմ	մ ³	60,09	4.136	248.504
3	Ե/բ 30x34 վաքերի տեղադրում	զծմ	924,5	15.569	14393.588
4	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ ²	1164,87	1.095	1275.182
Ընդամենը VII					16000.288
VIII. Ճանապարհի կահավորում					
1. Նշագծում					
1	Նշագծման ընդհանուր մակերեսը այդ թվում՝ թերմոպլաստ 3մմ ապակե գնդիկներով ԳՕՍՏ Ռ-51256-2018	մ ²	635,25	9.731	6181.400
2. Ճանապարհային նշաններ					
1	Նոր ճան. նշանների տեղադրում. ԳՕՍՏ Ռ-52290-2004 այդ թվում՝				
	- նախազգուշացնող	հատ	12	26.759	321.112
	- առավելության	հատ	38	26.759	1016.854
	- արգելող	հատ	5	26.759	133.797
	- թելադրանքի	հատ	1	26.759	26.759

	- հատուկ թելադրանքի	հատ	12	26.759	321.112
	- տեղեկատվության	հատ	3	26.759	80.278
	- լրացուցիչ տեղեկատվության	հատ	4	26.759	107.037
	- անհատական նախագծման	մ ²	13,17	29.192	384.458
2	Բետոն B-15	մ ³	7,35	72.980	536.402
	Կանգնակ մետ. խող 57/4մմ	գծմ	232,1	7.298	1693.864
3	Գոյություն ունեցող ճան. նշանների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	հատ	1	1.824	1.824
3. Արգելափակոցներ					
1	Նոր մետ. արգելափակոցի տեղադրում ծ=4մմ. շվեյլեր N16. քայլ - 4մ ԳՕՍՍ 26804-2012	գծմ	340	24.083	8188.348
2	Ազդանշանային սյուներ (C-1) պոլիմերային ԳՕՍՍ 32843-2014	հատ	77	4.379	337.167
Ընդամենը VIII					19330.412
IX. Դիտահորեր					
1	Միաձույլ բետոն B-20 նորոգում և բարձրացում	մ ³	6	79.062	474.370
2	Ե/բ սալ. թուջե կափարիչով և դիտանցքով	հատ	50	120.417	6020.844
Ընդամենը IX					6495.213
X. Մետաղական ե/բ խողովակներ					
1. Մետաղական ժարտ=720մմ խողովակի տեղադրում					
1	Հող. աշխատանքներ 10e IV կարգի բնահողում փոսորակների փորման համար էքս.1.0 մ3 2.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 7.0կմ հեռ. վրա	մ ³	18,0	2.250	40.504
2	Հող. աշխատանքներ 10e IV կարգի բնահողում փոսորակների փորման համար էքս.1.0 մ3 կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ ³	25,0	1.824	45.612
3	Ավազակույմային նախապ. h=10սմ	մ ³	0,448	4.136	1.853
4	Խճային հիմք h=30սմ	մ ³	6,624	4.865	32.228
5	Ջրհորի կառուցում միաձույլ բետոնից B 20. F100	մ ³	6,089	91.225	555.468
6	Որմնակապային ամրաններ Ø16 A500c l=134սմ	կգ	8,48	0.608	5.157
7	Մետաղական ժարտ=720մմ խողովակի տեղադրում 1գծմ=123.09կգ. պատի հաստ. 7մմ	գծմ	10,20	182.450	1860.988
8	Քավածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով խողովակ	գծմ	9,60	2.433	23.354
	բետոն	մ ²	23,70	1.095	25.944
9	Հետադարձ լիցք բուլդոզերով (10e VI)	մ ³	22,0	0.487	10.704
	ծեղքի աշխատանքով (10e VI)	մ ³	3,0	1.156	3.467
10	Մետաղական ցանցի պատրաստում և տեղադրում	կգ	162,704	0.973	158.322
2. Մետաղական ժարտ=820մմ խողովակի տեղադրում					
1	Հողային աշխատանքներ 10e IV կարգի բնահողում հունի ուղղման համար էքս.1.0 մ3 2.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 7.0կմ հեռ. վրա	մ ³	8	2.250	18.002
2	Հող. աշխատանքներ 10e IV կարգի բնահողում փոսորակների փորման համար էքս.1.0 մ3 2.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 7.0կմ հեռ. վրա	մ ³	47	2.214	104.045
3	Հող. աշխատանքներ 10e IV կարգի բնահողում փոսորակների փորման համար էքս.1.0 մ3 կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ ³	58	1.824	105.821
4	Ավազակույմային նախապ. h=10սմ	մ ³	1,132	4.136	4.681
5	Խճային հիմք h=30սմ	մ ³	19,684	4.865	95.769
6	Ջրհորի կառուցում միաձույլ բետոնից B 20. F100	մ ³	6,348	91.225	579.096

7	Գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B20 F100				
	հիմքեր	մ ³	2,71	91.225	247.219
	իրաններ	մ ³	2,712	91.225	247.402
8	Որմնակապային ամրաններ Ø16 A500c l=134սմ	կգ	16,96	0.608	10.314
9	Մետաղական ժարտ=820մմ խողովակի տեղադրում lզծմ=140.35կգ. պատի հաստ. 7մմ	զծմ	27,3	218.940	5977.056
10	Վաքի և հենակային ատամի միաձույլ բետոն B20 F100	մ ³	0,84	91.225	76.629
11	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով				
	խողովակ	զծմ	25,9	2.676	69.307
	բետոն	մ ²	49,35	1.095	54.023
12	Հետադարձ լիցք				
	բուլդոզերով (10e VI)	մ ³	52	0.487	25.300
	ձեռքի աշխատանքով (10e VI)	մ ³	6	1.034	6.203
13	Մետաղական ցանցի պատրաստում և տեղադրում	կգ	162,704	0.973	158.322
3. Հավաքովի ե/բ խողովակների d=1.0մ տեղադրում					
1	Հողային աշխատանքներ 10e-IV կարգի բնահողում հունի ուղղման համար էքս.1.0մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 7.0կմ հեռ. վրա	մ ³	151	2.007	303.049
2	Հող. աշխատանքներ 10e-IV կարգի բնահողում փոստրակների փորման համար էքս.1.0մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 7.0կմ հեռ. վրա	մ ³	99	2.007	198.688
3	Հող. աշխատանքներ 10e-IV կարգի բնահողում փոստրակների փորման համար էքս.1.0մ3 կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ ³	152	1.824	277.324
4	Ավազակոպճային նախապատրաստում h=10 սմ	մ ³	12,507	4.136	51.723
5	Գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B20 F100				
	հիմքեր	մ ³	11,034	91.225	1006.576
	իրաններ	մ ³	13,772	91.225	1256.349
6	Վաքի և հենակային ատամի միաձույլ բետոն B 20.F 100	մ ³	11,016	0	0
7	Հավաքովի ե/բ N12 օղակի տեղադրում V=0.35 մ3 P=0.9տ չափերը 120x100x10սմ ամբ.պարուն. Ac240=24.0կգ/մ3. Ac500=81.2կգ/մ3 F200 B20. Օղակների կարերի մշակում (կանեփաթել ներծծված բիտումով)	հաստ	46	79.062	3636.833
8	Օղակների հիմքերի միաձույլ բետոն B 20.F 100	մ ³	26,574	91.225	2424.211
10	Սոսնձային ջրամեկուսացում	մ ²	46,69	1.095	51.111
11	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով	մ ²	270,298	1.095	295.895
12	Հետադարձ լիցք				
	բուլդոզերով (10e VI)	մ ³	137	0.487	66.655
	ձեռքի աշխատանքով (10e VI)	մ ³	15	1.034	15.508
4. Հավաքովի ե/բ խողովակի d=1.0մ նորոգում					
1	Հունի մաքրում 10e IV կարգի բնահողում մուտքում. ելքում ձեռքի աշխատանքով. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 7.0կմ հեռ. վրա	մ ³	8,0	4.257	34.057
2	Հող. աշխատանքներ 10e IV կարգի բնահողում փոստրակների փորման համար ձեռքի աշխատանքով բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 7.0կմ հեռ. վրա	մ ³	2,0	4.257	8.514
3	Հող. աշխատանքներ 10e IV կարգի բնահողում փոստրակների փորման համար ձեռքի աշխատանքով կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ ³	1,5	1.824	2.737
4	Ավազակոպճային նախապատրաստում h=10 սմ	մ ³	0,152	4.136	0.629

5	Գլխամասերի նորոգում միաձույլ բետոնից B20 F100				
	մուտք	մ ³	1,0	91.225	91.225
6	Ելքում գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B20 F100				
	հիմքեր	մ ³	1,84	91.225	167.854
	իրաններ	մ ³	2,118	91.225	193.214
7	Հետադարձ լիցք				
	ծեղքի աշխատանքով (10eIV)	մ ³	1,5	1.034	1.551
5.Հավաքովի ե/բ խողովակների ապամոնտաժում					
1	Հող. աշխատանքներ 10e IV կարգի բնահողում մետ. խողովակի ապամոնտաժման համար էքս. 1.0մ3 2.տ. կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ ³	23,0	1.824	41.963
2	Գոյություն ունեցող ե/բ օղակների ապամոնտաժում. բարձում ա/ի և տեղափ լցակույտ 7.0կմ հեռ. վրա (d=1.0մ)	մ ³	5,6	2.433	13.623
3	Ճանապարհային հանույթից 10e-IV կարգի բնահողի բարձում էքս. 1.0մ3 2. տ. ա/ի և տեղափոխում 1.0կմ խողովակի տեղը լիցքի իրականացման համար	մ ³	13,0	1.946	25.300
4	Հետադարձ լիցքի իրականացում բուլդոզերով (10e-IV)	մ ³	36,0	0.487	17.515
6.Մետաղական խողովակի ապամոնտաժում					
1	Հող. Աշխատանքներ 10e IV կարգի բնահողում մետ. խողովակի ապամոնտաժման համար էքս. 0.65 մ3 2.տ. կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ ³	24,0	2.007	48.167
2	Գոյություն ունեցող մետ. ժարտ=720մմ խողովակի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	12,0	2.433	29.192
3	Ճանապարհային հանույթից 10e IV կարգի բնահողի բարձում էքս. 0.65մ3 2. տ. ա/ի և տեղափոխում 1.0կմ խողովակի տեղը լիցքի իրականացման համար	մ ³	5,0	1.946	9.731
4	Հետադարձ լիցքի իրականացում բուլդոզերով (10e IV)	մ ³	29,0	0.487	14.109
7. Սլավինսկի տիպի ե/բ կամրջի ապամոնտաժում					
1	Հող. Աշխատանքներ 10e IV կարգի բնահողում մետ. խողովակի ապամոնտաժման համար էքս.1.0մ3 2.տ. կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ ³	4,0	2.311	9.244
2	Ճանապարհային հանույթից 10e IV կարգի բնահողի բարձում էքս. 1.0մ3 2. տ. ա/ի և տեղափոխում 1.0կմ կամրջի տեղը լիցքի իրականացման համար	մ ³	17,0	1.946	33.084
3	Թռ. կառուցվածքի П-1 սալերի (չափեր՝ 18x100x160սմ. քաշը՝ 0.73տ. ա.պ. АI=29.1կգ/մ3. АII=88.30կգ/մ3) ապամոնտաժում բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 7.0կմ. հեռ. վրա:	մ ³	2,9	4.865	14.109
4	Միաձույլ բետոնե հենարանների քանդում հետահար մուրճով. բարձում ա/ի էքս.1.0մ3 2.տ. և տեղափոխում լցակույտ 7.0կմ հեռ. վրա	մ ³	6,4	4.865	31.138
5	Հետադարձ լիցքի իրականացում բուլդոզերով (10e IV)	մ ³	21,0	0.487	10.217
				Ընդամենը X	20923.886
Իջատեղ դեպի Արվյան					
XI. Հողային աշխատանքներ					
1	33բ-III բնահողի քանդում էկս.1.5մ3 2.տ. Բարձում ա/ի վրա և տեղափոխում լցակույտ 7.0կմ	մ ³	89	1.885	167.793
2	10e-IV կարգի բնահողի քանդում էկս.1.5մ3 2.տ. Բարձում ա/ի և տեղափոխում պահեստ 1կմ (կողնակի լիցք)	մ ³	296,46	1.946	576.950
3	10e-IV բնահողի մշակում բուլդոզերով. տեղափոխում լիցք 30մ (հարթում. ջրում. խտացում)	մ ³	33,48	0.584	19.547
4	10e-IV կարգի բնահողի մշակում բուլդոզերով. տեղափոխում 30մ կուտակումով. բարձում էկս 1.5մ3 2.տ ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ ³	605	2.433	1471.762

5	10e-IV կարգի բնահողի մշակում բուլղուզերով. տեղափոխում 20մ կուտակումով. բարձում էկս 1.5մ3 շ.տ ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ ³	512	2.068	1058.695
6	10e-IV բնահողի մշակում ձեռքով. բարձում ա/ի էկս 1.5մ3 շ.տ և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ ³	110,35	3.406	375.822
7	10e-IV բնահողի քանդում էկս 1.5մ3 շ.տ բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ ³	1675	1.824	3056.034
8	ճանապարհային հագուստի քանդում. բարձում ա/ի էքս. 1.5մ3 շ.տ. և տեղափոխում լցակույտ միջ 7կմ:	մ ³	817,83	1.946	1591.605
9	Ե/բ 30x34 վաքերի ապամոնտաժում. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ	զծմ	195	1.216	237.185
Ընդամենը XI					8555.393
XII. Կողային առու					
1	Կողային առուների իրականացում 10e-IV կարգի բնահողով էկս 0.65մ3 շ.տ բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ ³	289,20	2.007	580.409
Ընդամենը XII					580.409
XIII. Կողնակներ					
1	Կողնակների իրականացում ավազակոպային նյութով h=10սմ ԳՕՍՍ 25607-2009	մ ²	1332,3	0.900	1199.184
2	10e-IV կարգի բնահողի բարձում պահուստում էքս. 1.5մ3 շ.տ. ա/ի և տեղափոխում լիցք 1կմ (հարթում.ջրում.խտացում)	մ ³	296,4	2.007	594.859
Ընդամենը III					1794.044
XIV. Երթևեկելի մաս					
1	Մանրահատիկ խիտ տաք ա/բ h=4սմ տիպ "Ե" ԳՕՍՍ 9128-2013	մ ²	7363,5	4.075	30004.146
2	Խոշորահատիկ ա/բ h=6սմ ԳՕՍՍ 9128-2013	մ ²	7363,5	5.838	42991.015
3	Խճաքակապային հիմք (C-5) h=20սմ ԳՕՍՍ 25607-2009 100մ ² համար խիճ (40-70) 10% - 2.6մ ³ խիճ (20-40) 35% - 9.1մ ³ խիճ (10-20) 20% - 5.2մ ³ խիճ (5-10) 10% - 2.6մ ³ խիճ (0-5) ավազ 25% - 6.5մ ³ ջուր-1.1մ ³	մ ²	7502,49	1.581	11863.175
4	Հիմքի (C-5) մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 0.6լ/մ ² ԳՕՍՍ Ռ 58952.1-2020	մ ²	7502,49	0.487	3650.208
5	Հատիկավոր ենթահիմք (ավազակոպիճ) h=10սմ ԳՕՍՍ 25607-2009	մ ²	9183,23	0.791	7260.407
Ընդամենը XIV					95768.951
XV. Իջատեղեր և մուտքեր					
1	10e-IV բնահողի քանդում էկս 1.5մ3 շ.տ բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ ³	72	2.007	144.500
2	Մանրահատիկ խիտ "Ե" ա/բ h=4սմ (438+663+2727.42) ԳՕՍՍ 9128-2013	մ ³	1718,94	4.075	7004.186
3	Խճաքակապային հիմք C-5 h=12սմ 100մ ² համար ԳՕՍՍ 25607-2009 խիճ (40-70)- 10% - 1.56մ ³ խիճ (20-40)- 35% - 5.46մ ³ խիճ (10-20)- 20% - 3.12մ ³ խիճ (5-10)- 10% - 1.56մ ³ խիճ (0-5)- ավազ 25% - 3.9մ ³ ջուր-1.1մ ³	մ ²	1789,03	1.338	2393.660
4	Հիմքի (C-5) մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 0.6լ/մ ² ԳՕՍՍ Ռ 58952.1-2020	մ ²	1789,03	0.487	870.422

	Մետ. խողովակ Ø 530/7մմ ԳՕՍՏ 10704-91				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ ³	0,65	4.136	2.688
2	Մետ. խողովակի Ø530/7մմ տեղադրում	զծմ	10	87.576	875.759
3	Մետ. խողովակի Ø530մմ ջրամեկուսացում (2շերտ տաք բիտումով)	զծմ	8,8	1.824	16.056
4	Միաձույլ B-20 բետոնից գլխամասերի կառուցում	մ ³	1,6	79.062	126.499
5	Բետոնե գլխամասերի ջրամեկուսացում (2շերտ տաք բիտումով)	մ ²	6	1.095	6.568
	Մետ. խողովակ Ø 273/5մմ ԳՕՍՏ 10704-91				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ ³	7,209	4.136	29.813
2	Մետ. խողովակ Ø 273/5մմ	զծմ	203,3	40.139	8160.250
3	Խողովակի ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	զծմ	189,7	1.034	196.127
4	Միաձույլ բետոն B-20 հատման համար վաքի հետ	մ ³	1,02	79.062	80.643
	Ջրընդունիչ L=33 զծմ / Իջատեղ դեպի Արոյան 54.8զծմ				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ ³	3,562	4.136	14.731
2	Հավաքովի ե/բ վաք 30x34սմ	զծմ	54,8	15.569	853.184
3	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ ²	69,048	1.095	75.587
	Ցանց				
1	Մետ. շվեյլեր N8	կգ	773,18	0.851	658.311
2	Մետ. շվեյլեր N6.5	կգ	1163,952	0.851	991.027
				Ընդամենը XV	22500.010
	XVI. Մայթեր				
1	Բետոնե սալիկների. ձևավոր տեղադրում. մոխրագույն h=6սմ	մ ²	1109,1	8.514	9443.238
2	Ավազացեմենտային չոր խառնուրդ h=9սմ (70%-30%)	մ ²	1109,1	1.703	1888.648
3	Հավաքովի բետոնե անվտանգության եզրաքար 15x30սմ ԳՕՍՏ 32018-2012. ԳՕՍՏ 32961-2014 - միաձույլ բետոնե հիմք B-15 1զծմ-0.035մ ³ - ավազակոպճային շերտ h=5սմ 1զծմ-0.0125մ ³	զծմ	293	8.028	2352.143
5	Միաձույլ B-20 բետոնե 20x50սմ եզրաշար - ավազակոպիճ. 1զծմ-0.01մ ³	զծմ	10	5.838	58.384
6	Հավաքովի բետոնե 8x20սմ եզրաշարի տեղադրում ԳՕՍՏ 13015-2012 - միաձույլ բետոնե հիմք B-15 1զծմ-0.048մ ³ - ավազակոպճային շերտ h=5սմ 1զծմ-0.014մ ³	զծմ	206	2.493	513.657
7	Միաձույլ B-20 բետոնե 10x20սմ եզրաշար - ավազակոպիճ. 1զծմ-0.005մ ³	զծմ	333	3.892	1296.123
8	15x30 բետ. Եզրաքարի քանդում .բարձում ա/ի էկս. 1.5մ ³ շ.տ. և տեղափոխում լցակույտ 7.0 կմ	զծմ	105	1.216	127.715
				Ընդամենը XVI	15679.907
	XVII. Հավաքովի ե/բ վաքեր ԳՕՍՏ 32955-2014				
	30x34սմ				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ ³	38,1355	4.136	157.710
2	Ե/բ 30x34 վաքերի տեղադրում	զծմ	586,7	15.569	9134.362
3	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ ²	739,242	1.095	809.247
				Ընդամենը XVII	10101.320
	XVIII. Ճանապարհի կահավորում				
	1. Նշագծում				
1	Նշագծման ընդհանուր մակերեսը այդ թվում՝ թերմոպլաստ 3մմ ապակե զնդիկներով ԳՕՍՏ Ռ 51256-2018	մ ²	273,65	9.731	2662.794
	2. Ճանապարհային նշաններ				

1	Նոր ճան. նշանների տեղադրում. ԳՕՍՆ Ռ 52290-2004 այդ թվում՝				
	- նախագուշակներ	հատ	8	26.759	214.074
	- առավելության	հատ	6	26.759	160.556
	- արգելող	հատ	4	26.759	107.037
	- հատուկ թեղադրանքի	հատ	4	26.759	107.037
	- լրացուցիչ տեղեկատվության	հատ	4	26.759	107.037
	- անհատական նախագծման	մ ²	1,25	29.192	36.490
2	Բետոն B-15	մ ³	2,52	72.980	183.909
	Կանգնակ մետ. խող 57/4մմ	գծմ	78,1	7.298	569.973
3. Արգելափակոցներ					
1	Նոր մետ. արգելաթակոցի տեղադրում ճ=4մմ. շվեյլեր N16. քայլ - 4մ ԳՕՍՆ 26804-2012	գծմ	548	24.083	13197.690
2	Ազդանշանային սյուներ (C-1) պոլիմերային ԳՕՍՆ 32843-2014	հատ	9	4.379	39.409
3	Ե/բ ուղղորդ սյուների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	հատ	15	1.824	27.367
Ընդամենը XVIII					17413.375
XIX. Գիտահորեր					
1	Միաձույլ բետոն B-20 նորոգում և բարձրացում	մ ³	2,76	79.062	218.210
2	Ե/բ սալ. թուջե կափարիչով և դիտանցքով	հատ	23	119.201	2741.613
1. դիտահոր կմ 0+196.50					
1	Փոստրակի փորում ձեռքով 10eIVկ. Բնահողում կողքի կուտակումով հետ լիցքի համար:	մ ³	0,4	1.946	0.778
2	փոստրակի փորում ձեռքով 10eIVկ. Բնահողում բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ ³	0,8	2.250	1.800
3	ավազակույան շերտ h=10սմ	մ ³	0,11	4.136	0.455
4	Միաձույլ բետ. B-20	մ ³	0,716	79.062	56.608
5	Քրամեկուսացում (2 շերտ բիտումով)	մ ²	4	1.095	4.379
2. Ամրանավորում					
6	Ø12 A500 C	կգ	61,66	0.608	37.500
7	Ø8 A240 C	կգ	2,765	0.608	1.682
3. Ցանց					
8	Շվեյլեր N22 ԳՕՍՆ 8240-97 աղ. N2	կգ	42	0.851	35.760
9	Շվեյլեր N8 ԳՕՍՆ 8240-97 աղ. N2	կգ	36,8	0.851	31.333
10	Հետ լիցք ձեռքով	մ ³	0,4	0.973	0.389
Ընդամենը XIX					3130.506
XX. Ջրընդունիչ - 9գծմ կմ 0+000					
1	10e-IV կարգի բնահողի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7.0կմ	մ ³	0,6	2.250	1.350
2	Ավազակույան շերտ h=10սմ	մ ³	0,585	4.136	2.419
3	Հավաքովի ե/բ վաք 30x34սմ	Գծմ	9	15.569	140.121
4	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ ²	11,34	1.095	12.414
Ցանց					
5	մետ. շվեյլեր N8	կգ	126,9	0.851	108.047
6	մետ. շվեյլեր N6.5	կգ	191,16	0.851	162.760
Ընդամենը XX					427.111
XXI. Արհեստական կառուցվածքներ					
1. ստորին հենապատերի հիմնական աշխատանքներ					
1	10e-IV կարգի բնահողի մշակումը էքս. 1.5մ ³ շ.տ. կողքի կուտակումով հետադարձ լիցքի համար (փոստրակի փորման ժամանակ)	մ ³	103,29	1.703	175.889

2	Նույնը ձեռքով	մ ³	12,00	2.919	35.030
